

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

• **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի պաշտոնակատար **ՍԵՎԱԿ ԴԱԶԱՐՅԱՆ**

• **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն, մայիսի 1-6-ը, 2018 թ.

• **ՆՊԱՏԱԿԸ**

- ✓ Թեհրանի 31-րդ գրքի միջազգային ցուցահանդեսում վերջին տարիների հայաստանյան հրատարակչական արտադրանքի (գեղարվեստական, մանկապատանեկան, ալբոմային, հանրամատչելի, ճանաչողական, հանրագիտարանային գրականություն) ներկայացում, մասնավորապես՝ ՀՀ մշակույթի նախարարության պատվերով և աջակցությամբ հրատարակված գրականության ցուցադրում:
- ✓ «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շնորհանդես և լայնորեն տարածում իրանական հրատարակչությունների շրջանում:

2018 թվականի մայիսի 1-6-ը Հայաստանը մասնակցեց Թեհրանի 31-րդ գրքի միջազգային ցուցահանդեսին: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Հայաստանը ավանդական դարձած գրքի ցուցահանդեսին մասնակցեց իր առանձին տաղավարով՝ ազգային տաղավարների 15-րդ դահլիճում: Հայաստանից մեկնած խումբը բաղկացած էր 2 անձից: Ինձ հետ Թեհրան էր մեկնել նաև ՀՀ մշակույթի

նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գրականության հարցերով փորձագետ Արմեն Սարգսյանը:

Մայիսի 1-ին ժամանեցի Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրան:

Մայիսի 2-ին տեղի ունեցավ Թեհրանի գրքի ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությունը: Նույն օրը հանդիպում ունեցա ցուցահանդեսի կազմակերպիչների և պատասխանատուների հետ: Նրանց հրավիրեցի մասնակցելու այս տարի աշնանը նախատեսվող Գրքի երևանյան փառատոնին: ՀՀ և ԻԻՀ մշակույթի նախարարությունների միջև կնքված հուշագրի համաձայն՝ մշակութային փոխադարձ ծրագրերում, այս դեպքում՝ գրքի միջազգային ցուցահանդեսներում տարածքն ու կահավորումն անվճար է տրվում հարևան Իրանի և Հայաստանի մասնակիցներին:

Մայիսի 3-ին Հայկական տաղավարում տեղի ունեցավ «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի համար ստեղծված կայքէջի՝ «armlit.am»-ի շնորհանդեսը: Այցելելով հիշյալ կայքէջ՝ օտարերկրյա հրատարակչությունները կարող են ծանոթանալ ֆինանսավորում ստանալու համար հայտի ներկայացման կարգին և ժամանակացույցին) շնորհանդեսը: Ծրագրով աջակցություն է տրվում արտասահմանյան այն հրատարակչություններին, որոնք պատրաստ են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ դասական կամ ժամանակակից գրականություն: Շնորհանդեսի ժամանակ ելույթ ունեցա նաև ես՝ ներկայացնելով ծրագրի վերջին տարիների ձեռքբերումները. մասնավորապես՝ վերջին 3-4 տարիներին «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շնորհիվ մի քանի տասնյակ գրքեր են թարգմանվել հայերենից այլ լեզուների, ինչպես օրինակ Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը՝ ամհարերեն,

Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» վիպակը, Ստեփան Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը՝ անգլերեն, Արամ Պաչյանի «Տոտեսություն, Ծիտ» վեպը՝ անգլերեն, բուլղարերեն, Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ Օտոման» վեպը՝ սերբերեն, Հովհաննես Գրիգորյանի «Բանաստեղծություններ»-ը՝ ռուսերեն, Հովհաննես Թումանյանի «Հեքիաթներ»-ը՝ լատիշերեն և բազմում այլ ստեղծագործություններ:

Մայիսի 4-ին Հայաստանի տաղավարում տեղի ունեցան «Հովհաննես Այվազովսկի-200» գիրք-ալբոմի և Արտավազ ֆելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» գրքի (անգլերեն սեղմագրով) շնորհանդեսները: Տաղավարում առանձին հատվածում ներկայացվեց հայ ժամանակակից գրականությունը՝ հատվածական անգլերեն թարգմանություններով: Ելույթ ունեցա նաև ես՝ ընդգծելով տվյալ հրատարակությունների կարևորությունը և այն հանգամանքը, որ ՀՀ մշակույթի նախարարության վարած գրատարածման, հայ գրականությունն արտերկրում ավելի ճանաչելի և ընկալելի դարձնելու քաղաքականությունը իրականացվում է նաև միջազգային գրքի ցուցահանդես-տոնավաճառներին մեր երկրի մասնակցության միջոցով: Հավելեցի, որ Թեհրանի գրքի միջազգային ցուցահանդեսին Հայաստանի մասնակցությունը նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյա և Էրեբունի-Երևանի 2800-ամյա հոբելյաններին:

Մայիսի 5-ին այցելեցի Թեհրանի հայկական կենտրոնական եկեղեցու առաջնորդարան, «Ալիք» օրաթերթի խմբագրություն (նախորդ օրը «Ալիք»-ի թղթակիցը ծավալուն հարցազրույց ունեցավ ինձ հետ, որը հրատարակվեց հաջորդ օրվա տպագիր համարում), «Արտակ Արք. Մանուկեան» թանգարան, «Նաիրի» հրատարակչություն, հանդիպումներ ունեցա հայկական համայնքի ներկայացուցիչների և հայկական դպրոցների տնօրենների հետ: Ցուցահանդեսի ավարտին գրքերը նվիրաբերեցինք ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության գրադարանին:

Մայիսի 6-ին վերադարձա Երևան:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թեհրանի գրքի միջազգային ցուցահանդեսին մասնակցության արդյունքում աշխարհի տարբեր երկրներին ներկայացնել հայաստանյան գրահրատարակչական արտադրանքը՝ թե՛ ՀՀ մշակույթի նախարարության պատվերով և աջակցությամբ, թե՛ հրատարակչությունների նախաձեռնությամբ հրատարակված գրականությունը, ինչպես նաև ամրապնդվեց Հայաստանի և Իրանի միջև մշակութային գործընկերությունն ու երկխոսությունը:

ՀՀ մշակույթի նախարարության վարած «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը Թեհրանում ներկայացնելով՝ պայմաններ ստեղծվեցին, որպեսզի իրանական և օտարերկրյա այլ հրատարակչություններ շահագրգիռ լինեն հրատարակելու հայ գրականություն:

Հայկական տաղավար ունենալը Թեհրանում նաև հնարավորություն տվեց ներկայացնել Հայաստանում հրատարակվող գրքերի պոլիգրաֆիական որակը և ձևավորումը:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
մշակութային ժառանգության և ժողովրդական
արհեստների վարչության պետի պաշտոնակատար՝



Ս. ՂԱԶԱՐՅԱՆ